

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 117

18 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1913

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.— Թուրքիոյ համար տարեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20.— Մէկ թիւ՝ 1 դհկ.— Արտասահմանի՝ տար. Ֆր. 10. վեցամս. 5.— Վճարումնք կանխիկ են։

ՀԱՍՑԷ.— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի Շաբաթ օրեր։ 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն ղրկուած ու և է յօդուած։ 3.— Կեղծանունով ղրկուած յօդուածներու հեղինակը կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին։ 4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր։ 5.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը միայն։ 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին։ 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է անհրաժեշտ երկու դահեկանի նամականիշ ի միասին ղրկել։

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5։ Տպարանս ըստ ամենայնի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց համար։ Կը տպուին ամէն տեսակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարտեր, քարդ-աարէմներ, մահազդներ, ևն., ևն.։ Գիները ամենացածր չափով աժան են։ Գեղեցկագիտական ճաշակի և տպագրական մաքրութեան կողմանէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի մնան։

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ՝, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Երրորդ տարի ✠ 18 Հոկտեմբեր 1913 ✠ Թիւ 117

«Սրբազան Բանանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ՝ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթաթերթը շարունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կատարել, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար Սրբազան Հայրն ուրտագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաթերթը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարդ. Մէրի տէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս ԺԳ. Թերզեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 թուանամարաւ:

ԴԷՊՔԵՐ ԵՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ՆՈՐ ՀՐԷՇՏԱՒՈՐ ՀԱՅՑՀՈՑՈՒԹԻՒՆ

Ցոյց տալու համար թէ եկեղեցական օրինաւոր իշխանութեանց դէմ յամառ ըմբոստութիւնը մինչեւ ո՛րպիսի խորխորատներ կ'առաջնորդէ, պիտի անդրադառնանք, համառօտիւ ու մեծ ցաւով, դարձեալ Մեհմուտ ըսուած անիրաւ թերթին նորանոր մոլորութեանց վրայ։

Այս դժբախտ թերթը իր 5029 թիւին մէջ երկայն ու անլի յօդուած մը հրատարակած էր՝ Բարսեղ Ս. Բարսեղեան ստորագրութեամբ։ Յօդուածագիրը անօրինակ շաղակրատութեամբ կը ձաղկէր Համազգեաց օրիորդաց վարժարանին խնամակալութիւնը, անոր համար որ՝ — իբրեւ թէ,— անիկա այս ինչ էֆէնտիի միջնորդութեամբ, քսանամեայ երիտասարդ մը հրաւիրած էր դասախօսելու համար օրիորդներուն, և անուն ալ կուտար այս երիտասարդին՝ ոչ գովելի յանձնարարականով. իսկ ինքն այդ գործը ըստ ամենայն մասանց դատապարտելի կը գտնէր։ Լա՛ւ։ Եկո՛ւ տես որ, անմիջապէս հետեւեալ թիւին մէջ (5030) միեւնոյն թերթը կը հարկադրուէր հրատարակելու խմբագրական յօդուած մը, եղերերգօրէն յետսկոչական. և կը կցէր պաշտօնական վաւերաթուղթ մը ալ, որոնցմէ կ'ապացուցուէր որ յիշեալ յօդուածագիրը ձրի ամբաստանութիւն մը, ձրի զրպարտութիւն մը, անիրաւ յօդուած մը միայն սարքած էր խնամակալութեան և հանրութեան, ծնունդ իր հրատապ երեւակայութեան։

Թերթը սակայն պատ ի պատ բանիւք, ինչպէս իր սովորութիւնն է, ի չքմեղս կ'ըլ-

լար, իր անձնականին մասին, իր այս խոշոր սխալին ու յանցանքին, ժամանակի սղութիւնը, իր բաղմազբաղութիւնը, յօդուածներու քննութեան անկարելիութիւնը (?), առ յօդուածագիրս վստահութիւնը, եւն. մէջ բերելով խառն ի խուռն, մուխի մէջ փախթել ուզելով խնդիրը կամ մոխիր ցանել ուզելով ընթերցողին աչքերուն. — ապիկար զրաբանութիւն։

Տրամաբանական վերլուծումը սակայն անողոքելի եզրակացութեամբ մը ի յայտ կը բերէ՝

1. Այդ մոլորեալ ու դատապարտեալ թերթին ամենայոռի ընթացքը։ Ի սկզբանէ անտի սոյնօրինակ եղած է իր լրագրական պարկեշտութիւնը, որ փայլած է իր կատարեալ բացակայութեամբը։ Այս սիսդեմով է որ շարունակ տուած է անճիշդ, յերիւրուած, անհիմն սփիւռուտ լուրեր, այս սիսդեմով է որ հրատարակած է միշտ անէական և անգոյ զրպարտութիւններ. և այս տեսակ յօդուածները անթարթափ աչօք, անխլիրտ խղճով, անծուփ հոգիով հրատարակած է միշտ, պահ մը չխորհելով պարկեշտ մարդոց և անաչառ Դատաւորին հանդէպ ստանձնած ահաւոր պատասխանատուութեան վրայ...։

2. Այսպիսի անորակելի խմբագրութեան միակ՝ — անհունապէս վատ և ստորնացուցիչ.— շարժառիթը եղած է միշտ՝ իր անձնական կարծիքը, կիրքը, վրէժը, որուն զոհեց խեղճ հասարակութեանս պատիւը, եկեղեցականութեան արժանապատուութիւն, — անքաւելի ոճիր մը Եկեղեցւոյ ու Պատմութեան առջև։

3. Միանգամ եւս ակնյայտնի կը տեսնուի փիլիսոփայական անխզելի շղթայաշարումը պատճառի և արդիւնքի, և սարսափ կու տայ մարդուս։ Ահա՝ ուր կը յանգի յամառ անհնազանդութիւնը, եսասէր կիրքը, ամբարտաւան անձնահաճութիւնը։ Ցիրաւի Առտուածային Իմաստութիւնն էր որ գրեց, «Խորհ խորոց կարդան», «Եւ լինի յեսինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն»։

4. Ա՛ղեօք կը կարծէ՞ք որ մենք վերոյիշեալ անհիմն լուրին վրայ միայն կ'ուզենք ծանրանալ, անո՛ր համար միայն կը պարզենք այս խորհրդածութիւնները. ո՛չ բնաւ. ատիկա՝ կրնանք ըսել, չէր արժէր մեր աշխատանքը։ Մեհմուայէն ուրիշ բան չի սպասուիր։— Մենք գլխաւորաբար կ'ուզենք ողբալ ուրիշ չահատակութիւն մը, այդ յօդուածին մէջ, լիրբ և անպատկառ հայհոյութիւն, անօրինակ, հրէշաւոր, զոր պաղարեամբ, զոր ամբարշտօրէն ժպրհած է տպել այն՝ յիմարութեան գինւով արբեցած թշուառական թերթը։— Նախ եւ առաջ, բնաւ և ոչ ակնարկ մը իսկ չնետե՞ց այդ յօդուածին վրայ, որ՝ իբրև թէ պարկեշտութեան պատրուակին ներքև, անպարկեշտութիւնը կը ցուցադրէ՝ լպիրշ և հրապուրիչ նկարագրութիւններով, երկա՞ր ու երկար, Զօլայական իրապաշտ ցոփաբանութիւններով, որ արդէն բաստ ինքեան անպատուութիւն է ո և է թերթի. ուր մնաց որ, բարոյական անկումը՝ իբր բնական և ստիպողական իսկ ցոյց կու տայ, անմիտ փիլիսոփայութեամբ, անմտազոյն թեւադրութիւններով, և անհրաժեշտ անկումէն պատահական և առժամեայ խուսափումը կը սեղմէ ու կ'ուզէ վերադրել միայն քանամեայ այլասեռ ուսուցիչ մը չունենալու, կարեւորութիւն իսկ չտալով դաստիարակութեան, նկարագրի, համայնքի, խղճի, կրօնքի, հանդերձեալներու ազդեցութեան։ Որպիսի՞ բարոյական, Տէ՛ր Աստուած, կամ՝ լաւ եւս, ո՛րպիսի՞ անբարոյութիւն։

5. Բայց մենք դեռ չըսինք թէ ի՞նչ է հայհոյութիւնը... երանի՛ թէ ստիպուած չըլլայինք... բայց ըսենք, որպէս զի տեսնեն բարիները թէ ըմբոստութիւնը մինչեւ ո՛ւր կը տանի կամաւոր կոյրերը։ Այդ անամօթ յօդուածագիրը՝ կորովի, հրապուրիչ, դիւթող երիտասարդի մը դասախօսութեան պահուն՝ աղջկանց զգացումները, ճիւանի հաստաբեստ կուրծքը... սանուհիներու ելացումը, սիրոյ փերթերը, սիրոյ ոստայնը, նոյնպէս երիտասարդին զգացումները՝ զինք մագնիսացնող, հմայող սեռին առջեւ, հոգեկան երանութիւնը, գեղգեղիչ խօսակցութիւնը, սիրելու իտեալը, զգուանքը, եւն. ընդ երկար նկարագրելէ վերջը, (իր բառերուն քանի մը

հատը յակամայս գործածեցի՝ հայհոյութիւնը ցուցնելու համար), անմիջապէս վերջը կը ժպրհի սա բառերը աւելցնել, զորս կը տպէ այդ ցաւապար թերթը.

«Մեղադրելի չէ [1] անշուշտ երկու կողմերն ալ. երկուքն ալ նոր հասունցած կեանքի բերկրութեանը մէջ, երկուքն ալ նոր փթթած վայելելու համար, անշուշտ պիտի սիրեն ու սիրուին, անշուշտ պիտի երգեն սէրը՝ որ Յիսուս անգամ երգեց»:

Ահա Վոլթէր մը, Զոլա մը, ո և է անպատկառ անկրօն մը, դժոխք՝... !!

Նե՛րէ, Տէ՛ր Յիսուս...

. . . .

6. Մեճմուա ինչո՞ւ տպեց այդ յօդուածը. չկարդա՞ց նախապէս. անհաւատալի բան. ինչպէս կ՚ըլլայ. հապա իր պաշտօնը, պարտքը, պատիւը, խիղճը, կրօնքը... ինչո՞ւ տպեց ուրեմն: Բայց ինչո՞ւ տպեց Ս. Սրբոյն Յիսուսի հայհոյիչին և ուրիշ հերետիկոսութիւններով լի յօդուածները. ինչո՞ւ տպեց Գ. Մալխասեանները. ինչո՞ւ տպեց... իրենները. տպեց ու կը տպէ անվրդով այն ամէն յօդուածները որոնք իրեն կրքին և յետին գաղափարին կը ծառայեն, որոնք կը նախատեն հոգևոր իշխանութիւնը, հոգ չէ թէ հայհոյեն նաև Յիսուսի դէմ: Ո՛վ անկում...: Բայց նա հոգ չըներ. կը շարունակէ միշտ, իր կրքին բոցը կարծես անշիջանելի է. յարձակումներ անզադրում՝ մեր եկեղեցական պետին դէմ, զոր Ս. Քահանայապետը, այսինքն Քրիստոս ինքնին, կը ճանչնայ ու կը հրամայէ որ ճանչնանք մեզի հայր, հովիւ ու գլուխ. Մեճմուա չի ճանչնար, կը հեստէ, կը ճգնի՝ որ այլք ևս չի ճանչնան, հետեւն, բանադրուին, կորսուին: Ինչ դժոխային առաքելութիւն: Այժմէն իսկ սկսաւ ապստամբական յօդուածներով գրգռութիւններ ցանել, Ծննդեան առթիւ խռովութիւններ հանել տալու համար, բացայայտօրէն, անխիղճ կերպով, մէկդի նետելով դիմակը, որով կը կեղծէր ինքզինքը ճշմարիտ կաթողիկէ ձևացնելով. և որովհետև ժողովուրդը գրեթէ ամբողջութեամբ (ի բաց առեալ սա մի քանի ըմբոստները) բացարձակապէս ընդունած է Նոր տոմարը, Մեճմուա յուսահատութենէն կը փրփրայ, ամէն գնով կ՚ուզէ ապստամբեցնել... ո՛վ անխիղճ ու Աստուծմէ չվախցող թերթ, ինչ պատասխան պիտի տաս ահաւոր Դատաւորին:

Յօգնեցուցի, պժգացուցի զքեզ, ո՛վ բարի ընթերցող. բայց ներողամիտ եղի՛ր. հիմա կը լմնցնեմ. օրինակ մը միայն, պզտիկ մէջբերում մը, և շա՛տ իսկ...

Տեսէ՛ք, մեր իմաստուն, գերզգօն, Նուիրապետ և Հայր, Յիսուսի Փոխանորդ և Անսխալ Վարդապետ՝ Սրբազան Քահանայապետի համար, այլեւայլ ցափուտուքներէ վերջ ի՛նչ կ՚ըսէ.

«Պու տավանըն արթըգ սօնունը կէթիրմէք իչին, Բաբալըգ մագամը տախի չիմտիյէ գատար սալիք օլտուղը խալթը հարէքէթի թէպտիլ իթմէլի, վէ քէնտիսինի չարըըգ թարիգլէրէ սէվգ իտէն չօլրագ վէ մուգիրր միւշավիրլէրի էթրաֆընտան տէֆ իտիպ, խալիս վէ սամիմի միւշավիրլէր վասըթասըյլէ պու տավայա խիթամ վէրիլմէսի խուսուսընտա, պէօյլէ վէ բուհանի մագամա եագըշան մէսլէքը տովլանէջի իթթիխազ էյլէմէլի տիր»:

Ո՞ր ազատամիտ, ո՞ր բողոքական, ո՞ր հերետիկոս, ո՞ր անտարբեր անկրօն ասկէ ուրիշ կերպով պիտի գրէր:

*
* *

Սոսկացէ՛ք կիրքէն. սոսկացէ՛ք անհնազանդ ըմբոստութենէ. սոսկացէ՛ք Աստուծոյ պատիժէն...:

---

[1] Կ՚ուզէ ըսել՝ չենք. քերականութիւնն ալ յընչաց կը քերէ յաւակնոտ ազատամիտը, ինչպէս յաճախ. կէս-կէսի յանդգնութիւններ՝ բան մը գրելու մարմաջով այրող: Ասոնք գրիչը միայն շարժել կարենալով, կը կարծեն թէ կը գրեն. ու կը գրեն յոխորտանօք, անհամ, անտրամաբան, անքերական ոճերով, խճողուած խառնուրդ մը, բարդ ի բարդ կցկնութիւն սինլքոր ու գռեհիկ գաղափարներու, առանց գիտութեան, առանց հմտութեան, առանց ոճի: Մեճմուա ինչ ընէ, պէտք ունի. զի վասն սա տեսակները զիրար կը յաջորդեն, մէկ պայմանաւ որ լաւ հայհոյեն հոգևոր իշխանութեան դէմ և գոհացնեն Մեճմուայի պաշտեցեալ կիրքը... Ceux qui se ressemblent, s'assemblent. Աստուած յուղղութիւն բերէ:

ԼՈՒՐՏ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆԻՆ ԵԷՆԻ ՄԻՒՃԻԶԱԹԼԱՐԸ

(Տեվամը)

Բօթ իլլէթինէ մարուզ օլուպ «հարաքէթսիզ գալմըշ վէ պիր թարաֆտան օ պիր թարաֆընա տէօնմէքտէն աճիզ պուլընան Բրէվանըլը 3 եաշընտաքի Մարի Շարաէն թափօրտան սօնրա հարաքէթէ պաշլամըշ տըր վէ վալիտէսիյլէ պիրլիքտէ մուայէնէ վէ թաստիգ տայիրէսինէ կէլէպիլմիշ տիր։

Բարիզին Օրթօ սօգաղընտա 117 նումէրօյը խանէսինտէ իգամէթ իտէն 10 եաշլարընտաքի Ժիւլիէթ Կիւյէնին, սօլ տիզինտէ պիր պէյազ շիշ մէվճուտ օլուպ տիզինի պիւքմէյէ մանի օլույօր իքէն, ամենասուրբ Հաղորդութիւնըն կէզտիյի սըրատա տիզի աչըլմըշ վէ քէնտիսինին արզուսը իւզրէ Լուրտա համամլարընա կէօթիւրիւլտիւյիւնտէ քեամիլէն շիֆաեապ օլմուշ տըր։ Արթըգ շիմտի տիզինին իւզէրինտէքի ալչը գալտըրըլմըշ օլուպ, մէզպուրէ գըզճըղազ րահաթճա տիզ չէօքէպիլմէքտէ վէ տիլէտիյի հարաքէթի եափապիլմէքտէ տիր։ Պու մուճիզայը մուայէնէ վէ թաստիգ իտէն Գաէն սէրթապիպի տօքթ. Շարպօնիէ պու խուսուստաքի թէաճճիւպ վէ հայրէթինի կիզլէյէմէմէքտէ տիր։

Վալհօքըը 25 եաշընտա Ալամէ Բօրթալիս րէ.ը ազըր պիր խաստալըղ նէթիճէսի օլարագ հարաքէթսիզ գալմըշ վէ օթուրուպ գալգմագտան աճիզ պուլունուեօր իքէն, համամլարտա եըգանտըգտան սօնրա, արթըգ շիմտի գօշապիլմէքտէ տիր։

Սէն—Ժոնէ—ան—րի շէհրինտէ 35 եաշընտա Մարի Ճէյմս, էն ազըր պիր րահմ խաստալըղընտա մարուզ պուլունուեօր վէ ուզուն պիր սանտալյա իւզէրինտէ եաթըպ գալմագտա իքէն, վէ հաթթա քէնտիսինի թէտավի էյլէյէն տօգթօրըն շըմէնտըֆէրլէ 50 քիլօմէթրօլըգ պիր մէսաֆէտէ պուլունան Լուրտա կիթմէմէսինի թէնպիհ էյլէմիշ օլտուղը հալտէ, Լուրտա կէլմիշ վէ շիմտի օլտուգճա րահաթլանմըշ տըր։ Շէօյլէքի պազը տօգթօրլար մէզպուրէնին քեամիլէն սաղալմըշ օլտուղընա պիլէ գարար վէրիյօրլար։

Գօնեաք շէհրինտէ 23 եաշընտաքի Ֆէրնանտ Մօնրէ, միւտհիշ պիր սըգըյա թութուլըպ գօլթուգ տէյնէքլէրիյլէ կէզէպիլմէքտէ իքէն, Ս. Հաղորդութիւնըն թափօրընտա գուվվէթլի պիր աղըր հիսս իտէր վէ ատէթա պայըլըր պիր հալտէ տիւշէր։ Սօնրա տէյնէքլէրինի աթարագ սէրպէսթճէ թափօրա իշթիրագ իտէպիլիր։ Մուայէնէսինտէ թապիպլէր արթըգ էյի օլմուշ օլտուղընը թաստիգ իտէրլէր։

Նանսի զիյարէթճիլէրիյլէ պէրապէր կէլմիշ օլան 38 եաշընտա մատմազէլ Էօժէնի Բուր սօլ այաղընտա չըգարմըշ օլտուղը պիր եարա նէթիճէսի օլարագ պիր սէնէտէն պէրի գալգամամագտա վէ եիւրիւյէմէմէքտէ վէ հաթթա պիր տէօշէք իւզէրինտէ եաթմըշ օլտուղը հալտէ Լուրտա կէթիրիլմիշ իքէն, Ս. Հաղորդութիւն թափօրընտա այաղը տօղրուլմըշ վէ կիւզէլճէ եիւրիւմէյէ պաշլամըշ տըր. Մուայէնէ տայիրէսինտէ խասթանըն միւշքիլաթսըզ վէ զահմէթսիզ եիւրիյօր օլտուղը թաստիգ օլունմըշ տըր։

Բօթ իլլէթինէ թութուլմուշ օլան վէ ազայը միւֆլասը հարաքէթսիզ գալմըշ պուլունան Պէնաժը 31 եաշընտա մատամ Մարկէրիթ Բուզօլ, Լուրտ մաղարասընըն գարշըսընտա սաղալմըշ տըր։

Ճիյէր վէրէմինէ վէ Բօթ իլլէթինէ տիւչար օլուպ խայլը սէնէլէրտէն պէրի միւզթարըպ պուլընան 31 եաշընտա Լիմօժլը մատմազէլ Աննա Լավէրն Լուրտա զիյարէթինտէ շիֆա պուլմըշ տըր։

Եինէ, ճիյէր վէրէմինէ վէ բօթ իլլէթինէ թութուլմուշ օլան վէ արգասը տիւշարը չըգմըշ պուլընան Մանս մատամ Րուօ թափօր վագթը էյի օլմուշ տըր։

Բասթէլ Սարրա Սէնլի 19 եաշընտա սօլ պաճաղը սագաթ մատմազէլ Պէրնաա հավըզլարընտա շիֆա պուլմուշ տըր։

Լիլ շէհրինտէ 28 եաշընտա մատմազէլ Թէրէզ Սիմօն պիր մարազը պաթնիյէ միւպթէլա օլուպ հաթթա ամէլիաթ պիլէ կէօր-

մըշ իքէն , տայիմի սուրէթտէ աղըրլար հիսս իթմիյի հալտէ , Ս . Հաղորդութիւնըն կէզտիյինտէ , պաքըրճա թօբլանմըշ օլան մաստէքի մայիէ թապիի սուրէթտէ պօշանարագ (թապիպին բաբօրը տըր) քէամիլէն իֆադած պուլմուշ տըր ։

Լա Կօրկըը 35 եաշընտա մատմազէլ Էլէն Պրու պիր զաաֆը ումումիյէ մարուզ օլուպ , իշթիհասը պիւսպիւթիւն քէսիլմիշ վէ սէսի տէ քեամիլէն գըսըլմըշ տը ։ Պու հալին նէթիճէսի օլարագ , իւչ սէնէ զարֆընտա , սըգլէթինտէն 25 քիլօ ղայիպ իթմիշ օլան պու զավալլը ղըզ շիմտի հէր նէ գատար տա տահա զայիֆ իսէ տէ , զահմէթսիզ եիւրիւյէպիլմէքտէ օլուպ իշթիհասը տա աչըլմըշ տըր ։

Օն ալթը եաշընտան պէրի թօբ հալինտէ պուլունան Պամպէլի 52 եաշլարընտաքի մատմազէլ Վալանթին Ֆէրայլ , Լուրտ հավզընտա եըգանարագ պիւսպիւթիւն շիֆա պուլմուշ տըր ։

Տահա պունլարտան մաատա բէք չօք շիֆալար վագը օլմուշ իսէ տէ , հէնուզ տօգթօրլար թարաֆընտան օ շիֆալարըն թապիի սուրէթտէ օլմատըղընա տայիր վէրիլէն գարարլար վիւրուտ էյլէմէտիյինտէն , շիմտիլիք պու գատարըյլա իքթիֆա իտիլմիշ տիր ։

Պու սէնէ օգոստոս 24տէն սէպտեմպեր 7 յէ գատար Լուրտ մաղարասընա կէլէն զիյարէթճիլէր պէր վէճհի ատի տիր ։

Վիլիէ Թէմինտէն , 2500 Նանթտան 3400 , Անժէտէն 1200 , Սթրասպուրկտան 650 , Պօրտօտան 6000 , Տինիզտան 500 , Թուրնէտէն 1500, Մէցտէն 1200, Սէն — Տիէտէն 675 , Ակսթրիատան 580 , Ալման Նօթր Տամ սը Լուրտ շիրքէթինտէն 1250 , Թրուատան 500 , Պամպէրէտէն 10,000 , Իթալիատան 350 , Պայէօտէն 1200, Տիժօնտան 900 , Ավինեօնտան 1202 , պունլարըն 800 ի էրքէք տիր , Պէլճիքատան 450 , Նանսիտէն 1000 , Սէնթ—Էթիէն էյալէթինտէն 1800 , Լիւքսէմպուրկտան 450 , Սէէտէն 1200 ուխտաւոր կէլմիշ տիրլէր ։

(Մապատի վար)

ԵՐ. ՏԷՐ ԿՈՄԻՏԱՍ ՆԱՀԱՏԱԿԻՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՎԱՍՆ

յետին ժամանակիս ազգիս մերոյ հակառակութեան որ ընդ մխիթարեանս վասն Կաթողիկութեան, եւ յաղագս որոյ յայտնելոյ ումեմն երկրորդ լուսաւորիչ կոչեցելոյ յոմանց, եւ վասն նորին գործոց եւ վարուցն, եւ վասն համախոհից նորին։

Յետ այսորիկ քէահեայ վէզիրին բռնութեամբ հրամայեաց Սուլտանն Փաթրիկին գնալ յԻստամպօլ և մի՛ մնալ յԷտրէնէ, և նա ակամայ կամօք ելեալ յԷտրէնու գայր յԻստամպօլ յառաջնոյն կերպի և այլ աւելի, այսինքն զանազան փառօք. ընդ որում առաջ ելեալ քահանայքն և իշխանք քաղաքիս համանգամայն և տարան ի Ս. Աստուածածին եկեղեցին և նա իսկ և իսկ ի կիր արկանէր զշարութիւնն։ Եւ իբրեւ սակաւ ինչ աւուրց անցանելոյ գալստեան նորա՝ եկն չաւուշ մի ի վէզիրէն զի ինգարով[1] տարցէ զնա յԷտրէնէ. քանզի փախուցեալ արքն որ գնացին յԷտրէնէ՝ յետ ելանելոյ սորա անտի՝ արզ արարեալ էին վէզիրին և ամբաստանեալ էին զՓաթրկէն. վասն որոյ նա հրամայեալ էր զի ինգարով բերցեն զնա աստ, առէ, զի գէմ յանդիման լինիցին միմեանց դատաճան. և ես տեղեկացայց ապա բանից ձերոց։ Եւ չաւուշն իբրեւ եկն աստ և սա կաշառօք յամեցուցանէր, զի գիր առաքեաց առ մուֆթին իւր զի հրամայեսցէ ոչ գնալ նմա յԷտրէնէ. ապա եկն պատասխանի ի դրանէ մուֆթուն թէ՝ մի՛ երկնչիր, այլ ի քաղաքացւոյն արզ առեալ[2] եկեսցես անահ և անկասկած։ Եւ Փաթրիկս քանիցս անգամ գնաց առ դատաւորն Իստամպօլու վասն արզի և ոչ ետ։ Դարձեալ զբազում կաշառս ետ նմա զի տացէ վասն լաւութեան իւրոյ արզ և դատաւորն ոչ ետ։ Բայց աստ դատաւորն գնացէք արզուհալ արարէք Դայմախամին

1 Դատաւորին հրաւէրով։

2 Արզ առեալ, յանձնարարական առնլով։

քահանայիւք և ժողովրդօք և լաւութեան քո անդ վկայեացեն, և եթէ նա ինձ հրամայեսցէ տալ զարդն, և ապա տացից [1]։ Վասն որոյ սա Աւետիք Փաթրիկս յիսնակի Բարեկենդանի կիրակին որ ծանուցումն արար յեկեղեցի Ս. Աստուածածնին, ասելով, եթէ ոք Լուսաւորչի իցէ գնասցէ ի դուռն Ամիրային և վկայեսցէ վասն իմոյ լաւութեան. այլ և միւս եկեղեցիքն զգիրս առաքեալ և ետ ընթեռնուլ յաւագ երիցանց և ծանուցումն առնել ասելով եթէ ոք Լուսաւորչի իցէ եկեսցէ առ դուռն փաշային։ Արդ ո՞վ ոք իշխէր առ ի չգնալ անդ. քանզի չարաբարոյքն դիտէին, նկատէին, և ի համարսն առնէին զոչ եկեալսն, յամենայն կողմունքն զծանօթս իւրեանց, վասն որոյ յահէ չարախօսացն որք կամաւ և որք ակամայ գնացին։ Իսկ քահանայք քաղաքիս ամենեքեան լի և անթերի գնացին. անդ էր և Սարու Մատթէոս կաթողիկոսն ընդ ամբոխին, և իբրեւ մտին ի պալատն ամիրային, մինչ գրեթէ ոչ տանիւր պալատն լայնանիստ զբաղմութիւն ամբոխին և սկսան, ասէ, համաձայն աղաղակել բիրտ և հաստ ձայնիւ թէ՝ Պիզ Աւետիք Փաթրիկի խսթէրուզ, զայրիսուն խսթէմէուզ [2]։ Ընդ որ ոստուցեալ զայմախանն ասէ, զի՞նչ իցէ աղաղակն այն. և իբրեւ ծանեաւ ի մերձակայիցն՝ հրամայեաց զի զիսօս հասկացողս նոցա և զէշպէնս ի վեր յառաջ կոչեսցեն, որոց գլուխ եղեալ Սարու կաթողիկոսն Մատթէոս և այլք ընդ նմա։

Ասէ զայմախանն, ո՞վ ես դու։ Ասէ Սարու կաթողիկոսն. Սիզ Փաթրիզի [3]։ Ասէ փաշայն. Ապա զի՞նչ կամիս։ Ասէ Սարուն. Աւետիքի խսթէրուզ։ Ասէ փաշայն. Դո՞ւ հաւաքեցեր զայդքան ամբոխդ և կոխեցիք զսարայս իմ. և բարկացեալ ամիրայն հրամայեաց թէղ ֆալագայ սէոշէնսին։ Նախ և առաջ գլուխն Մատթէոս Սարու կաթողիկոս առեալ ի վայր և քշտեցին փաթափաթ երեսուն և մի բիր, այլ և երեսուն արանցն՝ երեսուն երեսուն տէկէնէկ. անդ էիր դիպեալ եղբայր և տեսանէիր զփաղչօղսն ատտ և անդ, ոմանք զկաշառս տային չաւուշից թէ պահեցէք զմեզ. և ոմանք՝ թէ մեք ի նոցանէ չեմք վալլահ պիլլահ. մուսապէթ և լուլուվայութիւն անպատմելի. կերին զծեծսն ի փաշայէն և եկեալ առաջի Փաթրկին գոհանային եւ Սարու կաթողիկոսն յետ սակաւ աւուրց աներեւութացաւ։ Իսկ Փաթրիկն Աւետիք գնաց ընդ չաւուշին յէտրէնէ։ Եւ եմուտ յէտրէնէ գնաց առ մուֆթին և ծանոյց նմա զիրսն. իսկ մուֆթին՝ վաղվաղակի զգիր իմն առաքեալ առ վէզիրն վասն Փաթրկին իւրոյ, եւ իբրեւ յանդիման եղեն վէզիրին յատեան նորին, եւ վէզիրն իսկոյն սրգիլել հրամայեաց զոսոխսն Փաթրկին. եւ անդանօր Փաթրիկն Աւետիք գուն գործեալ եւ ջանք արարեալ զբաղում դրամս վերստին ծախեալ եւ զկնի աւուրց ինչ առաքեցին զերկուս արս յԻստամպօլ ի քիւրէկ։ Եւ ինքն Փաթրիկն մնաց յէտրէնէ ի Նոյեմբեր ամսոյն մինչեւ յունիս, մերձ ի մահ մուֆթուն իւրոյ։

Բայց դու եղբայր ունկնդրող աղէտալի պատմութեանս, տես արդ եւ զյառաջակայ բանս՝ զոր ճառելոց եմ քեզ. զի վերոգրեցեալ Իզմիրցի սեւագլուխն այն, որ Փաթրկէն վէքիլ նստէր յԻստամպօլ, թէ ո՞րքան զղանազան չարիս նիւթեաց եւ գործեաց. հանճարեղն ի չարիս եւ յաջողակն յանօրէնութիւնս. քանզի վեհն իւր Աւետիք Փաթրիկն ոչ գործեաց, զորս սա գործեաց, զբազմազան եղեռնագործութիւնս եւ առաւել գեր ի վերոյ երեւեցաւ քան զնա։ Բանզի յեկեղեցիս քարոզէր եւ հրամայէր այրել զգրեանս աղօթից եւ ասէր. Այրեցէք զկոչեցեալն Պարտեզ հոգեւոր. զԱկն հոգեկան. զբուրաստանն աղօթից. զՑիսուս որդին. զծաղիկն զօրութեանց, զԹօմայ Դեմբացին. զնոկումն, նաեւ զայլս նմանս սոցին։ Այլեւ ինքն ժողովեալ զնոսա ատտի եւ անտի փոյթ այրէր և այլոց հրամայէր այրել։ Եւ ասէր, «եթէ ոչ գտանիւր ի միջի նոցա անուն Աստուծոյ ասէի ձեզ թէ ի յաղբս արկէք զնոսա»։ Արդ

---

[1] Տաց։

[2] Մենք Աւետիք Բաթրիքը կ'ուզենք, ուրիշը չենք ուզեր։

[3] Սոյ կաթողիկոս։

սովոր են սոքա զամենայն ինչ յաղբս արկանել. որպէս ի Ս. Երուսաղէմ զՄարտիրոս եպիսկոպոսի զատամն խլեցին ի բաց, զաչսն այրեցին, զմօրուսն փետեցին, եւ այնու ոչ շատացան, այլեւ զՍ. վեղարս նորին տարեալ յաղբս արկին. վասն որոյ մի՛ մեղադրէք զնոսա, եւ վասն այսմ պատճառի զատելոյն զնոսա Տեառն Մինասայ՝ ի վերայ նորա զայնքան բարուրս եդին. ի գանձէն հանին եւ սուրբ տանն երկու հարիւր քսակ մեծ հասուցին։ Եւ դարձեալ ասէր, եթէ ով հարցանիցէ ի ձէնջ թէ ընդէ՞ր այրեցիք զնոսա, միթէ զի՞նչ իցէ մեղս նոցին։ Պատասխանէր թէ ահա այս է մեղսն նոցա, զի գրեալ է ի նոսա ուտել զձուկն եւ զմիս յաւուրս պահոց, եւ խառնակ անկողնօք ոչ խորշել առ ի մերձենալ ի սրբութիւն, այսինքն յերեկոյին շաղախիլ ի մեղս եւ յառաւօտուն հաղորդիլ ի փրկական մարմին Տեառն։ Վասն այնորիկ, այրեցէ՛ք զնոսա, ասէ, և մի՛ խնայէք եւ մի՛ ընդունիք ասէր զտպեցեալ գիրքսն զի թիւր են նոքա։

Դարձեալ յեկեղեցի Տիրածին կուսին որ ի Գումգափին, զպղծեալ տաճարի ետ կարդալ, եւ զՋուր օրհնեալ սրսկեաց զեկեղեցեաւն՝ ասելով՝ վասն այն կարդամ պղծեալ տաճարի, զի պղծեալք են զսա վարդապետք եւ քահանայք կաթոլիկք, քանզի պատարագեալ են աստ։ Վասնզի պատարագք լատինաց եւ յունաց ոչ են պատարագք եւ ոչ ներգործեալ գոյափոխեն նշխարք նոցա մարմին Տեառն. եւ ոչ է մարմին Տեառն, այլ լոկ հաց, քանզի հերձուածողք են եւ հատեալ յանդամոց Քրիստոսի։

Դարձեալ Կալաթու եկեղեցին որ յանուն Ս. Լուսաւորչին է, զսեմս եկեղեցւոյն եւ զսեղանն սուրբ վերստին օծեաց միւռոնաւ, եւ ինքն եպիսկոպոս ոչ գոլով, այլ լոկ վարդապետ։

Դարձեալ զՍուրբ Գէորգ եկեղեցւոյ որ ի Սուլիմանաստր զխորանն իւն քակեաց, եւ զչինուած տախտակացն կտորեաց եւ զպատկերսն խորտակեաց, զոր եւ մեք իսկ տեսաք աչօք [1]։

[1] Տէր Կոմիտաս ականատես վկայ է։

Դարձեալ ի մէջ քարոզին ասէր, եթէ դրօշ՝ եւ անուն Ս. Լուսաւորչին մերոյ ի գետնի անկեալ էր և կոխան եղեալ ի կաթոլիկաց, բայց մուֆթին էֆէնտին մեր, կրկին Լուսաւորիչ եղեալ մեզ, եւ զանկեալն վերստին բարձրացոյց զեղջիւր Լուսաւորչին մերոյ եւ զանուն նորին։

Դարձեալ թէ զայսչափ զանս եւ զբանդս եւ զհալածանս կրեն կաթուղիկքն, եւ ժուժեալ համբերեն, եւ զարմանամ զի ոչ թրքանան մին եւ երկուսն որ ասէք թէ տեսէ՞ք որչափ թոյլ են ի հաւատոց Կաթուղիկքն, զի վաղվաղակի թուրքացան։

Դարձեալ զերեխայս ոմանց ոչ տայր մկրտել, թէ զաւակք կաթուղիկէից են, և մնային թարձ[1] մկրտութեանց իբրեւ զամիսս չորս կամ հինգ, եւ յետ այնորիկ ի ձեռն միջնորդաց եւ կաշառաց ապա թէ գաղտագողի եւ թաքնաբար մկրտէին։ Իսկ ոմանց զերեխայսն ամենեւին ոչ ետ մկրտել. եւ ծնողք զաւակացն վասն երկիւղի մահուան ի կարծիս եղեալ զոր եւ բազում անգամ պատահի երեխայից՝ տանէին գաղտ յեկեղեցիս Յունաց եւ մկրտէին զնոսա անդ։

Դարձեալ զմեռեալս ոմանս ոչ տայր թոյլ թաղել, թէ Կաթուղիկք են. բայց ի կաշառաց այսինքն երեսուն ղրուշ, կամ աւելի, կամ պակաս առնուին, եւ ապա հրամայէին առ ի թաղել զնոսա։

Դարձեալ զնոսա հաղորդող քահանայսն խուզէին՝ զի ի ձեռն բռնաւորաց տացեն, վասն որոյ ոմանք փախչէին եւ վասն նոցա զբանադրանս կարդային յեկեղեցիս հրապարակաւ։

Դարձեալ զաղքատ մեռեալս որք եւ Կաթոլիկք կարծէին՝ ոչ թաղէին եւ ոչ տային հրաման քահանայիցն առ ի կատարել զկարգս նոցա, մինչեւ եւ քահանայքն եւս երկնչէին ինքեանք, վասն որոյ առանց քահանայից թաղէին։

[1] Առանց

(Շարունակելի)

ՕՐՄԱՆԵԱՆԻ ՄԻՋԱԴԷՊԻՆ ԱՌԹԻՒ

Կ'ընդունինք հետեւեալն ի հրատարակութիւն։

«Տո՛ւր պատասխանի անզգամին՝
ըստ անզգամութեան իւրում,
«Յանդիմանեա՛ զանմիտն, եւ
յաւելցէ ատել զքեզ» :

Այս օրերս Կ. Պոլիս հրատարակուող Էջմիածնական Հայ լրագիրներու մէջ մեծ, բայց շա՜տ մեծ վայնասուն մը փրթած է։ Այդ վայնասունն այնչափ մեծ է, որ, ինչպէս միշտ հայկական ըռուած գործերը, այսպէս այս անգամուան վայնասունն ալ Հրէից եայկարան կը յիշեցնէ ըստ առածին. «Ցերկունս գոլով լեառն ահագին, Եւ ձայն բարձեալ գոչէր ուժգին, Ապուշ խուժանն կայր ի զընին, Ահա ծընաւ մուկըն չնչին։» Ի՞նչ էր գործուած մեծ, անպատմելի, զարշելի, զազրելի, սոսկալի ոճիրը. հայ ուղղափառ վարդապետ մը, (Գերյ. Հայր Գաբրիէլ Ծ. Վարդապետ Մէնէվիշեան) յանդգնած էր (ինչ սարսափելի բան!) հիւանդ Օրմանեան Արքեպիսկոպոսին քովը երթալ, իրեն Ս. Խաչ մը նուիրել և զինքը յորդորել որպէս զի, զղջալով իր անցեալին վրայ, դառնայ դարձեալ Մի, Սուրբ, Կաթողիկէ և Առաքելական Եկեղեցին, որուն մէջ ծնած, դրոշմուած, խորհուրդներով սնած, կրթութեամբ և դաստիարակութեամբ զարգացած, և Սուրբ Աստիճաններու բարձրացած էր, երդմամբ և ուխտիւք։ Յիսուս Քրիստոս Տէրն մեր կը հրամայէ հովուին իննսունն և ինն ոչխարները թողլով՝ կորսուած մէկ ոչխարին ետեւէն երթալ, և զայն գտնելով, իւր ուսերուն վրայ դնել, և ուրախութեամբ դառնալ ի փարախ։ Բայց Յիսուս Քրիստոս և Տէրն մեր մոռցեր է ըսել թէ Հայ անշահախնդիր լրագիրներուն և լրագրապետներուն հաւանութիւնը կարեւոր էր։ Եւրոպիոյ մէջ հարկ մըն է, (կը հասկնա՞ք), անհրաժեշտ պարտք մը, նուիրական և սուրբ պարտք մըն է, դարձի բերելու ջանալ իրենց ուխտը և երդումը յարգել ու յորդորել ուղղափառութիւնը թողլով, դասալիք եղած եկեղեցականները և աշխարհականները, մանաւանդ իրենց ծանր հիւանդութեանց ժամանակ և ով որ այսպիսիներէն մէկը դարձի բերել յաջողի, իր հոգին ալ կը փրկէ. «Եւ փրկեսցէ զոգի իւր ի մահուանէ։» Կը հարցնենք էջմիածնական Հայոց թէ ինչո՞ւ համար ուղղափառութիւնը թողլով, և իւր ուխտին և երդման դրժող դժբախտ հիւանդի մը քով երթալով չպիտի կարենայ ուղղափառ Քահանայ մը հրաւիրել զինքը ի դարձ և յապաշխարութիւն։ Ինչո՞ւ աշխարհիս ամէն կողմ պիտի կարենան, առանց անպատեհութեան և դիտողութեան, այդ բանը ընել, բայց հոս Արեւելքի մէջ ո՛չ. ո՞րն է այն օրէնքը, ըլլայ Աստուածային և մարդկային, որ ատիկա կ'արգելու։ Պիտի ըսեն թերեւս թէ, Օրմանեան Արքեպիսկոպոսը Նախկին Պատրիարքն է, և ասոր համար ազգին պատիւը չի ներէր որ դառնայ հոն, ուր ծնած և սնած էր։ Ազգին ո՞ր պատիւը, ա՞յն պատիւը, որուն համար բոլոր սրիկաները ժողվելով, և իր բնակարանին պատուհաններէն վեր մագլցելով ելաք և զինքը կառքի մը մէջ դնելով ամենայն խայտառակութեամբ Բ. Դուռ տարիք։ Ա՞յն պատիւը որուն համար խայտառակ և լկիրչ նկարներ տպելով, և բոսթայով, առանց գոնէ օտարներէն ամչնալու, ամէն կողմ ղրկեցիք։ Ա՞յն պատիւը որուն համար զինքն և զձեզ ամէնքդ ամէն ազգաց առջեւ խաղք և խայտառակ ըրիք։ Եւ հիմակ ալ, առանց պատկառելու, կը սկսիք պոռալ պոռչտալ, իբրև թէ զինքը և իր պատիւը պաշտպանելու համար։ Ե. Օտեան «Հեռաձայնի (Առաջին Տարին Թիւ 77 (1582) թուոյն մէջ Կաթոլիկ Կղերի հասցէին շատ մը պատուսմունքներ կու տայ. գիտենք թէ, իրենց համար, Կաթոլիկ Կղերն մոլեռանդ է կամ կրօնամոլ. թէ նոր բան մը չի սորվիր, և հինէն ալ բան մը չմոռնար ևն., ևն., ևն.։ Բայց ինչ որ չէինք գիտեր, Կաթոլիկ Կղերն անկրօն ալ է եղեր, ինչու որ Մէնէվիշեան Հ. Գաբրիէլ վարդապետի մասին խօսելով կ'ըսէ վերոյիշեալ լրագրին մէջ. «Մխիթարեան հմուտ վարդապետը ապանօվաբար (?) այնքան հաւատացեալ է, որքան ես կամ դուք (որոնք են այս դուքերը)։ Անտարակոյս Ե. Օտեան այս ապանիովութիւնը առած է Էջ-

միածնական Եկեղեցականներէն դատելով. և իր երբեմն ի Դաղղիա ձրի կամ ուժան կերակուր ուտելու համար ժուժկալ բողոքական ձեւանալէն հետեւցնելով։ «Ալէմի նա՞սրլ պիլիրսին, քէնտին կիպի։» Կաթողիկէ Եկեղեցւոյ պատկանող Քահանայ մը, երբ սկսի Նոյն Եկեղեցւոյ վարդապետութեանց չհաւատալ, ապահովաբար կը թողու կ'ելլէ։ Ուստի Կաթողիկէ Եկեղեցւոյ ծոցին մէջ անհաւատ քահանայն չի կրնար ապրիլ։ Ե. Օտեան, իրեն մեծ խելքովն և իմաստութեամբը կը պնդէ թէ, գիտնական, խորհող, իմաստուն մարդ մը իրեն չափ, (այսինքն ոչ երբէք) «կարեւորութիւն կու տայ Քաղկեդոնի ժողովքին, Նիկիոյ հանգանակին, Լեւոնի Տոմարին» ևն., ևն.։ Մվ Յոյն եկեղեցի, ո՛վ Պատրիարքարան Յունաց, տե՛ս սա Հրեշ քոյր Հայ եկեղեցին, որուն հարազաս զաւակները յիշեալ ժողովներուն վճիռները կ'անուանեն «անճոռնի այլանդակութիւններ։ Հայ Էջմ. Պատրիարքարանը և Եկեղեցականութիւնը ոչ միայն չքողոքեց, այլ կ'ուրախանայ կը հրճուի և կը ցնծայ այդպիսի խայտառակ ջատագովներու վրայ նայելով։ Զարթի՛ր, ո՛ Հայր հոգւոց մերոց, Սուրբդ Գրիգորիոս, և տե՛ս թէ քու լուսաւորած որդիքդ Քրիստոսի Աստուածութիւնը կ'ուրանան Արիոսի հետ, և Քաղկեդոնի ժողովոյ վճիռը, և Սուրբ Լեւոնի Տոմարը արհամարհելով և քրիստոսի երկու բնութիւնը մերժելով Աստուածաչարչար հերետիկոսներ դարձեր են. եւ Պատրիարքարանը կը լռէ, Եկեղեցականութիւնը կը լռէ, ինչ որ զարմանալի է, այս եւ ասոնց նման շատ մը մոլար վարդապետութիւններով, եւ իրենց կոծնական կատարեալ և անսահման անխղճութեամբ կ'ուզեն եւ կը պահանջեն որ զիրենք իբրեւ ուղղափառ ընդունինք !!! Ինչ յաւակնութիւն։

Խորհող և իմաստուն մարդիկ, ինչպէս են Ե. Օտեան և իր նմանները, չեն կրնար հաւատալ և ընդունիլ վերոյիշեալ Նիկիոյ և Քաղկեդոնի ժողովներուն վճիռները և ուրիշ այդ տեսակ անճոռնի այլանդակութիւններ. (այսպէս Գրիգոր Լուսաւորիչ և իր յաջորդներն ալ տգէտներուն եւ ապուշներուն կարգը կ'անցընեն)։ Երենակայեցէ՛ք Կաթողիկէ Ուղղափառ Եկեղեցին իր երեք հարիւր միլիոնէ աւելի հաւատացեալներով, վեհապետներէն սկսելով մինչեւ ցյետին աղքատ, աշխարհիս ամենէն աւելի զարգացեալ ազգերէ բաղկացած, ինչպէս են, Իտալիա, Դաղղիա, Աւստրիա, Գերմանիա, Սաքսոնիա, Պաւիէրա, Սպանիա, Բորդուկալ, Հոլանտա, Պելճիգա, Անգլիա, Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկա, ևն., ևն., որոնց մէջ ամենէն հոյակապ գիտնականներ եղան, կան և պիտի ըլլան. և ասոնց ամէնքն ալ Օտեանի և իրեն նման քանի մը էջմիածնական Հայ դաւաճաններու համար անշան, տգէտ, ապուշ և սինլքոր մարդիկ են։ Ողորմելիներ։ Օտեանէն և իր նմաններէն կը խնդրենք նախ, որ իրենց գրած և հրատարակած յիմարական և միանգամայն ամբարիշտ յօդուածներուն տրուած պատասխանները, եթէ քաջ և պատուաւոր մարդիկ են, իրենց լրագիրներուն մէջ հրատարակեն, ինչ որ արդէն ըստ օրինաց տպագրութեան, իրենց պարտքն է։ Եւ երկրորդ, իրենց անճոռնի յօդուածները գաղղիերէն լեզուով հրատարակուող լրագիրներու մէջ տպել տալու քաջութիւնը ունենան։ Ըստ Օտեանի, «Կաթոլիկութիւնը իր հոգեվարքին մէջ» կը գտնուի եղեր. և գիտէ՞ք ինչու համար, վասն զի «Քրիստոնէութիւնը տիրող կրօնք մը ըլլալէ դադրեր և պատմական կրօնքներու կարգը կ'անցնի կոր» եղեր։ Մարդս այս տողերը կարդալով, չի կրնար ինքզինքը զսպել և այդպիսուոյն հասցէին ապուշ և յիմար բառերը չարձակել։ Վասն զի եթէ Քրիստոնէութեան կեանքը իրեն պետական կրօնք ըլլալուն վրայ կայանար, հապա Քրիստոնէութեան առաջին երեք դարերուն մէջ, յորս, ինչպէս կ'ըսէ Տէրտուղղիանոս՝ իրեն ջատագովութեան մէջ, կռոց տաճարներէն գուրս, ամէն կողմ Քրիստոնեաներով լեցուն էր, միթէ Քրիստոնէութիւնը հոգեվարք էր։ Եւ բաց ասոնի, այս սկզբունքով հաստատած չըլլա՞ր որ Էջմ. Եկեղեցին շատոնց մեռեր, թաղուեր եւ փտեր է։ Սքանչե՛լի գիտութիւն եւ արամաբանութիւն։ Եւ մտածել որ այսու հանդերձ, կը

յանդգնին իրենք զիրենք Լուսաւորչական անուանել։ Այո՛, Լուսաւորչական են, ինչպէս Սկիպիոն կը կոչուէր Ափրիկեցի՝ Կարքեդոնը հիմնայատակ կործանելուն համար։ Սառնք ամէն օր Սուրբ Լուսաւորչի յիշատակը կ'անիծեն, զիրենք Քրիստոնէութեան դարձնելուն համար. վասն զի, կ'ըսեն, եթէ կռապաշտ մնացած ըլլայինք, մեր թագաւորութիւնն դեռ կանգուն պիտի ըլլար !!! Աստուած խելք ու միտք տայ։ Եթէ կռապաշտ մնացած ըլլայինք, այսօր ոչ միայն գիր, գրականութիւն, լեզու եւ ազգութիւն չպիտի ունենայինք, այլ եւ մէյ մէկ իշապան պիտի ըլլայինք։ Ինչ որ այսօր ենք, Լուսաւորչայ շնորհիւն՝ Քրիստոնէութեան կը պարտինք։ Ապա թէ ոչ, ազգաց պատմութեան մէջ մեր անունը միայն մնացած պիտի ըլլար։ Ե. Օտեան իւր յիշեալ յօդուածին մէջ կ'ըսէ թէ, եթէ ասկէ քառասուն, յիսուն տարի առաջ Մէնէվիշեան Հ. Գաբրիէլի այս ձեռնարկը տեղի ունենար, թերեւս «եղերական միջադէպներու տեղի տար։» Բայց բարեբախտաբար հիմա մեր նախնեաց մտայնութիւնը չունինք եղեր։ Անշուշտ Ե. Օտեան կը մոռնայ, կամ չ'ուզեր յիշել հանգուցեալ Յովհաննէսեան Եպիսկոպոսի վրայ Հաճընցի Խօշանլը Գէորգի կողմանէ կատարուած սպանութեան խժդժական փորձը. կը մոռնայ, կամ չուզեր յիշել խեղճ Պարոնեան Հայր Սրապեանի բարբարոսական սպանումը ի Պարսկաստան եւն. եւն։ Բայց ինչ հարկ այնչափ հեռուները երթալ, մինչև հոս կ. Պոլսոյ մէջ, երբ քանի մը տարի առաջ Օրմանեան Արքեպիսկոպոսին մայրը, որ երբեք էջմիածնական եղած չէր, երբեք անոնց Եկեղեցիները ոտք դրած չէր, եւ որ ամէնուն իրրեւ կտակ կը յանձնարարէր, որ չըլլայ թէ էջմիածնականներն զինքը թաղեն, եւ որ իր վերջին հիւանդութեան ժամանակ եւս կաթողիկէ ուղղափառ քահանայէ Եկեղեցւոյ Սուրբ Խորհուրդներն ընդունելով իր սուրբ Հոգին Արարչին ձեռքն աւանդեց, էջմիածնականներն առանց ամենեւին քաշուելու, պատկառելու, մարմնոյն տիրացան եւ թաղեցին։ Ահա էջմիածնական Եկեղեցւոյ եւ էջմիածնական Հայոց ամէն օր բարձրաձայն քարոզած ազատախոհութիւնը, ազատամտութիւնը։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

(Շարունակելի)

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԷԻ

ՏՕՆԱՑՈՒՑԱ

Հոկտեմբեր 19	† Կիր. բա.	Ե. զկնի Խաչին
20	Բշ. բկ.	Յովսեփայ Սասուածահօրն:
21	Դշ. գա.	Ղուկիանոսի հարիւրապետին եւ որոց յինքն եմա:
22	Դշ. գկ.	Պահոց :
23	Եշ. դա.	Թոդդիոսոնի քահանային եւն. Եւ Խարիբեանց եւն.:
24	Ուրբ. դկ.	Պահոց:
25	Շբ. սա.	Դեմետրեայ վկային եւ Բասիլիսկոսի քահանային։

Ս. ԽԱՉԻՆ ՏՕՆԵՐԸ

Բ. Դիւտխաչ

Ս. Խաչին երկրորդ երեւելի տօնն է Դիւտխաչ, որ, ինչպէս ըսինք, տեսնով Խաչվերացին հետ միասին կը կատարուէր բայց հիմայ մեր քով առանձին տեղի կ'ունենայ Խաչվերացին եօթներորդ կիրակին։ Ս. Խաչին գտնուելուն մասին արդէն խօսուեցաւ փոքր ի շատէ։

Գ. Երեւման Խաչ

Այս տօնը, զոր կը կատարենք մենք յիսանց հինգերորդ կիրակին, հաստատուած է աւելի լուսեղէն Խաչի մը Փողոթայի վրայ երեւնալուն, Երուսաղէմի Ս. Կիւրեղ Հայրապետին օրով։ 351 մայիս 7ին, ցորեկ տասն օրին մէջ երեւցաւ մեծ, հրաշալի Խաչ մը որ ակնախիտ պայծառութեամբ կը յաղթէր արեւու ճառագայթներուն, Փողոթայէն մինչև Ձիթենեաց լեռը կ'երկնար, և շրջապատուած էր պայծառ նշոյլներով որոնք գուսանաղեղ ակնոթով ծրածան մը կազմէին։ Եւ այս երեւոյթը տեւեց ժամերով. այնպէս որ սուրբ քաղքին բոլոր բնակիչները տեսան զայն, և հիացումով ու երկիւղով լեցուած մայր եկեղեցին դիմեցին միանգամայն ամէնքը, այր և կին, ծեր և աղջայ, բնիկ և օտար, քրիստոնեայ և հեթանոս անոնք և միաբերան օրհնեցին Յիսուսը և փառաւորեցին անոր սուրբ հաւատքը։ Անհաւատներէն շատերը դարձի եկան և Ս. Կիւրեղէն հրահանգուելով մկրտուեցան։ Ս. Կիւրեղ, ականատես վկայ այս մեծ հրաշքին, թուղթ գրեց այս մասին Կոստանդ կայսեր և մանրամասնօրէն պատմեց այս շնչախարշիկ դէպքը։ Այս թուղթն է որ գրուած է Երեւման Խաչի ընդարձակ երգուածներուն սկիզբը։

Դ. Վարագայ Խաչ

Այս տօնը մեզի սեպհական է և կը կատարուի Խաչվերացի երրորդ կիրակին։ Հաստատուած է 653ին Հերիփսիմեանց Խաչափայտին Վարագ լերան վրայ

երեւնալէն։ Այս մասին հետեւեալ տեղեկութիւնները կու տան մեր պատմագիրները. Հռիփսիմէ և Գայիանէ կոյսերը Հայաստան եկած ատեննին՝ Քրիստոսի Խաչափայտէն մաս մը ունէին։ Այս մասը՝ Հռոմ տարած էր Պատրոնիկէ, Կղոդիոս կայսեր կինը, և ապա տրուած էր Հռիփսիմէ կուսին, որ նոյն Տիկնոջ տոհմէն էր։ Հալածանքի ժամանակ Հռիփսիմեանք այս կենաց փայտը առնելով փախան եկան Հայաստան։ Երբ հասան Տոսպ գաւառը, Վարագ լեռը, իրենց ուղեկից քահանաներէն և քոյրերէն ոմանք այն տեղ կեցան, և կենաց Փայտը տարին ամփոփեցին վէմի մը մէջ։ Հռիփսիմեանց նահատակութենէն յետոյ աւանդաբար կը խօսուէր թէ Վարագ լերան վրայ կենաց Փայտէն մաս մը կը գտնուի. բայց ոչ ոք գիտէր ճշգիւ ո՛ւր ըլլալը։

Շատ ժամանակ վերջը Ներսէս Շինողին և Վարդ Պատրիկին օրով, երբ Թոդիկ ճգնաւորը և իր Յովէլ աշակերտը աղօթքի կեցած էին, յանկարծ օր ցերեկով Վարագ լեռը լոյսով լեցուեցաւ և Ս. Խաչը ամբողջ ժողովուրդին աչքին առջև թռաւ ամփոփուած տեղէն շողարձակ երեւոյթով, և գնաց մտաւ եկեղեցին ուր էին Թոդիկ և Յովէլ, և հանգչեցաւ Ս. Սեղանին վրայ։ Եկեղեցին լոյսով և անուշահոտութեամբ լեցուեցաւ։

Մինչև իրիկուն մնաց լոյսը, և ապա անյայտ եղաւ։ Խաչանիշ լոյսէն սա ձայնը եկաւ. Քրիստոս հաճեցաւ որ հոս բնակի Սուրբ Խաչը, իրեն ապաւինողներուն բժշկութեան եւ փրկութեան համար։ Հոն եկան Ներսէս Կաթողիկոսը և Վարդ պատրիկը և որոշուեցաւ որ այնուհետև ամէն տարի Խաչին երեւցած օրը մեծ տօն կատարուի։

Ահա ասոնք են չորս տօները Ս. Խաչին, որ ամէն քրիստոնէի փառքն ու պարծանքն է։ Անով Յիսուս Քրիստոս, Մարդացեալն Աստուած, փրկեց խեղճ մարդկութիւնը յաւիտենական դատապարտութենէ։ Անով ցոյց տուաւ մարդոց՝ իր անսահման բարութիւնը, իր անհուն մեծութիւնը, իմաստութիւնը. զանոնք մաքրեց սրբեց ստորնաքարշ կիրքերէ, զանոնք լուսաւորեց, հեռացուց անոնցմէ մոլորութեան բազմադարեան խաւարը. և ըրաւ զանոնք դիւցազներ անվեհեր, պատրաստ՝ իրենց հաւատքին և պարտքին համար արիւննին իսկ թափելու։ Երբ հասնի աշխարհիս վերջին օրը, Յիսուս դարձեալ այս Սուրբ Նշանով պիտի գայ լուսազեղ ամպերու վրայ բազմած, և իր ընտրեալներուն երջանիկ թափօրին առջեւէն պիտի քալեցնէ զայն իբրև յաղթական դրօշակ։

Ով որ կ՚ուզէ մասնակցիլ այդ երանեալներու թափօրին պէտք է որ այս աշխարհիս վրայէն Խաչին հետեւի, խաչին յառէ միշտ իր աչքը, իր միտքը, իր սիրտը. անոր յայտնած ճշմարտութիւններով տոգորուի, անոր ազդած զգացումներով լեցուի. մէկ խօսքով, գործադրէ անոր վսեմ սկզբունքները, որոնք միայն կրնան ըստ կարի հանգստութիւն պարգեւել մարդուս նոյն իսկ այս արտասուաց հովտին մէջ։

Եւ արդարեւ վայրապար կը ջանան խեղճ աշխարհի մարդիկ, ամբարտաւան աղանդաւորներ, ի զուր կը ճաթեցնեն իրենց խելապատակները որ նոր նոր սկզբունքներ գտնեն մարդիկները համերաշխօրէն հանգստօրէն ապրեցնելու համար։ Խաչը, Խաչը թող դիտեն, հոն պիտի գտնեն մարդկային կենաց բոլոր կնճռոտ խնդիրներուն լուծումը, մարդկութեան երջանկութեան գաղտնիքը։ Հոն պիտի տեսնեն ճշմարիտ մարդասիրութեան այնքան զօրաւոր ազդակներ, որոնք միայն կրնան ջնջել ատելութիւնը, քէնը, ոխը, վրէժխնդրութիւնը, անիրաւութիւնը բռնութիւնը։ Հոն պիտի տեսնեն թէ Մարդացեալ Աստուծոյ մահուամբ մարդիկ գերբնական կարգի բարձրացեր են, ամէնքը մի և նոյն անգին արիւնով գնուեր են, ամէնքը ժառանգներ զաւակներ եղեր են միեւնոյն հայրենիքի, ուր պիտի երթան թագաւորեն յաւիտենից յաւիտենից։ Կրնա՞ն գտնուիլ ասոնցմէ աւելի զօրաւոր պատճառներ ընկերսիրութեան, համերաշխութեան, եղբայրակցութեան, հաւասարութեան, ազատութեան, արդարութեան։

Եկեղեցին այս ամէն ճշմարտութիւններուն մարդոց մտքին մէջ դրոշմուիլը և գործադրուիլը բաղձալով, ստէպ ստէպ կը տօնախմբէ Ս. Խաչը։ Այս իր բաղձանքը կատարողը կրնայ վստահ ըլլալ թէ պիտի վայելէ ճշմարիտ հանգստութիւն թէ՛ այս աշխարհիս վրայ՝ համբերելով վշտերու, և թէ անդին՝ անվերջ փառքով։

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

,,ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ'' ԳՐՔԷՆ

Գիրք Ա.—Գլ. ԺԴ.—Յանդուգն դատումէ խորշելու վրայ։

Յաճախ մեր ներսին մէջ կը գտնուի ծածուկ բան մը. կամ նաեւ դուրսէն ալ բան մը անոր կը միանայ, որ զմեզ ալ նմանապէս կը քաշէ կը տանի:

Շատեր իրենց կատարած գործերուն մէջ գաղտնապէս իրենք զիրենք կը փնտռեն, ու չեն գիտեր:

Նաեւ կը կարծուի թէ անվրդով խաղաղութեան մէջ են, երբ իրերը կ՚ընթանան իրենց կամքին ու հաճոյքին համեմատ. իսկ երբ իրենց բաղձացածէն տարբեր բան մը հանդիպի, շուտով կը խռովին ու կը տրտմին:

Զգացումներու եւ կարծիքներու տարբերութեան պատճառաւ բաւական յաճախ երկպառակութիւններ կը ծագին բարեկամներու ու քաղաքացեաց մէջ, կրօնաւորներու եւ բարեպաշտներու միջեւ:

ԱԶԳ եւ ԿՐՕՆՔ

Ա.

ԱԶԳԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Մարդկային Բնութիւնն օժտուած է այլ եւ այլ միտումներով եւ հակումներով, որպէսզի անոնց տուած մղումովն իր պարտականութիւններն հեշտութեամբ կատարէ. բայց նոյն միտումներն ու հակումներն չափազանցուելով կիրքերու և մոլութեանց կը փոխուին, որոնք փոխանակ օգտակար ըլլալու վնասակար ազդեցութեամբ մը կը սկսին տիրել մարդուս կամքին և զայն մոլորեցնելով կը խոտորեցնեն իւր ուղիղ ճամբէն։

Այսպէս ալ ազգասիրութեան և հայրենասիրութեան վեհ զգացումը որով մարդս դիւրութեամբ և սիրով կը կատարէ այն երբեմն ծանր պարտականութիւնները, զորս պարագաները իր վրան կը դնեն նկատմամբ այն համայնքին որու կը պատկանի, ահա նոյն այդ վեհ զգացումը, որու մեծագործութեանց ըստէպ կը հանդիպինք պատմութեան էջերուն մէջ, կատարեալ պատուհաս մը կը դառնայ թէ՛ նոյն համայնքին և թէ ընդհանուր մարդկութեան համար. երբ իւր օրինաւոր սահմանէն անցնելով կը մտնայ ազգայնամոլութեան շաւղին մէջ որ անպատճառ կործանման կը տանի։

Մարդն առանձինն ապրելու սահմանուած չէ, այլ իւր բնութիւնն բացայայտ և բացարձակ կերպով կը պահանջէ ընկերային կեանք մը, որովհետեւ այն զարդարուած է այնպիսի սքանչելի յատկութիւններով որոնք զինքը կը ներկայացնեն տիեզերաց պարունակած սքանչելեաց իբր մի մանրակարը և որոնց սակայն գլխաւորագոյնները առանց գործածութեան պիտի մնային՝ եթէ մարդն չուզէր ճանչնալ իւր ընկերական պարտականութիւնները։ Հետեւաբար այս պարտականութիւնք իւր ազատ կամքէն չէ որ կախում ունին, այլ իւր բնութեան հեղինակէն և անոր կարգադրութենէն։ Եւ ինչպէս որ ազատ չէ այս պարտականութիւնը յանձն առնելու կամ չառնելու, նոյնպէս ազատ չէ անոնց սահմանը որոշելու, այլ պէտք է մինչեւ ծայրը երթայ, եթէ չ'ուզեր վնասակար ըլլալ այն ընդհանուր կարգ ու սարքին որու մաս կը կազմէ։

Մարդկային ընկերութեան նախնական տարրն է ընտանիքը, որու անդամներն՝ արեան սերտ կապերով միացած՝ ուղղակի բնութենէ կը սորուին այն ամէն պարտականութիւնները, որոնցմով բեռնաւորուած են իրարու նկատմամբ եւ զոր կարելի է համառօտել սա մի քանի բառերով. փոխադարձ պարտականութիւնք, իրաւունք, յարգանք, սէր։ Եւ ամէն անհատ որ անձասիրութեան կիրքէն մղուած եւ միայն ինքզինքը մտածելով՝ իւր վրայէն կը նետէ ընտանեկան պարտականութեանց բեռը, այնպիսին՝ թէ՛ ինքն դժբախտ կ'ըլլայ, շեղելով բնութեան ճամբէն և թէ՛ ընտանեաց միւս անդամները դժբախտութեան կը մատնէ՝ զրկելով զանոնք իրենց իրաւունքէն. այսպէսով ընտանեկան յարկը որ սահմանուած էր երջանկութեան վայր մը ըլլալու՝ կը դառնայ դժոխքի, եւ անձնասէր մէկ անդամը ամբողջ ընտանիքի մը կործանման պատճառ կ'ըլլայ։

Ինչպէս որ արեան մտերմագոյն կապերն ընտանեկան միութիւնը կը կազմեն, այսպէս ալ, ընտանիքներու աւելի կամ նուազ խումբերէ կը բաղկանան ցեղեր, ազգեր, թագաւորութիւններ որոնք կը միացնեն իրենց ոյժերը և յատկութիւնները որպէս զի ի վիճակի ըլլան աւելի դիւրութեամբ հասնելու իրենց նպատակին, որ է հոգալ իրենց երկրային կեանքին պիտոյքները, հեռացնել իրենց օրինաւոր բարգաւաճման անիրաւ թշնամիները, միով բանիւ հասարակաց ոյժերու միութիւնն եւս իւր անդամներուն վրայ կը դնէ պարտականութիւններ, որոնց հաւատարիմ և յօժարակամ գործադրութիւնը ազգասիրութիւն կը կոչուի։ Սոյն պարտականութիւնք ևս համեմատաբար կրնան բաղդատուիլ ընտանեկան պարտականութեանց։

Ազգասիրութեան այս առաքինութիւնն է որ պիտի չափաւորէ անհատական կամ ընտանեկան անձնասիրութեան մոլորութիւնները, եւ չպիտի թոյլատրէ որ անհատ մը կամ ըն-

տանիք մը այն աստիճան տարուի իւր անհատական կամ ընտանեկան շահերէն որ ազնոց զոհէ հաւարակութեան ընդհանուր շահը։

Ահա այդ անհատական կամ ընտանեկան շահերու գերադասութիւնը երբ կը յաջողի ձեռք անցնել նաեւ ոյժը, կը կազմէ բռնապետութիւնը որ բոլորովին հակառակ է հայրենասիրութեան կամ ազգասիրութեան։

Բայց ինչպէս որ անհատական կամ ընտանեկան անձնասիրութիւնը արգելք է հասարակաց բարւոյն, նոյնպէս ալ կայ ազգասիրութեան չափազանցեալ ձեւ մը, որ վնասակար է թէ՝ ազգին և թէ՝ ընդհանուր մարդկութեան կամ դրացի ազգերու։

Որովհետեւ, ինչպէս որ իւրաքանչիւր անհատ կամ ընտանիք պարտաւոր է մի միայն ինքզինքը չմտածել, այլ նկատի առնել նաեւ իւր մերձաւորին իրաւունքը, այսպէս ալ ազգերու համար եւս պարտականութիւններ կան դրացիներու եւ ընդհանուր մարդկութեան նկատմամբ, վասն զի ինչպէս որ մարդկային ընկերութիւնը միայն ազգով չի սահմանափակուիր, այսպէս ալ ընկերական պարտականութիւնք միայն ազգասիրութեամբ չեն վերջանար, հետեւաբար երբ ազգ մը միայն իր շահը մտածելով՝ ուրիշ ազգերու իրաւունքները բնաւ նկատի չ'առնուր, երբ իւր օգուտն իւր գերագոյն օրէնքը կ'ըլլայ, նա ընդհանուր մարդկութեան վնասակար՝ և իւր նպատակէն շեղած կ'ըլլայ։

Ուրեմն այս տեսակէտէն ակնարկ մը տանք պատմութեան վրայ եւ պիտի տեսնենք թէ ինչպիսի օգտակար դասեր պիտի տայ մեզ, պիտի տեսնենք թէ ինչպէս շատ մը ազգեր իրենց այդ ազգասիրամոլութենէն մղուած՝ մարդկութիւնը շեղեցուցեր են իրենց ուն նպատակէն։ Ազգասիրամոլութեան այս վնասը թէ և ամէն ճիւղերու մէջ տեղի ունեցաւ, բայց մասնաւորապէս զգալի եղած է մարդկութեան յաւիտենական նպատակին ծառայող կրօնական խնդիրներու մէջ, որովհետեւ ազգասիրամոլութիւնը համարձակեցաւ նոյն իսկ յաւիտենական ճշմարտութիւններն ու կրօնքն գործիք մը ընել իւր մասնաւոր շահերուն՝ փոխանակ զանոնք իրեն կանոն գործոց ընելու։

(Շարունակելի) ***

ԳԱԹՕԼԻԿ ՄԷՋՇԷՊԻ ԷՍԱՍԱՐԸ (*)

(Տեվամի)

— Պիւթիւն մախլուգաթդա վէ հաբթա են ասիլերիյդ պիրէ մէշղուլ օլմակ հիչ Ալլահա եագըշըր մը:

— Պունտա Ալլահա եագըշմայաճագ հիչ պիր չէյ եօգ տըր։ Ալլահ մախլուգաթը եարաթմայը իսթիհգար իթմէսիքտէն սոնրա, խալգ էյլէմիչ օլտուղը մախլուգաթը գայրըմայը, ինլարդա մէշղուլ օլմայը հիչ իսթիհգար էթմէզ...։ Կիւնէշ պէօյիւք վէ եիւքսէք օլտուղը իչուն տըր քի ինուն չիւլէլերի հէր թարաֆա նուր վէ հայաթ իսալէ իտէրլէր։ Ալլահ տախի նա միւթէնահի սուրէթտէ պէօյիւք օլտուղընտան տըր քի ինուն ինտինտէ պէօյիւք վէ քիւչիւք եօգ տըր։ Օ, պիր էսէրի լութֆը իլահիսի օլարագ մախլուգաթը վար էյլէմիշ օլուպ, պու կիւն տէ ինլարը մուհաֆազա էյլէր վէ պիր րէսէր վէ վալիտէ կիպի ինլարը թաղտիյէ իտէր։

Շայէտ, Ալլահըն մախլուգաթ հագգընտա իպրաղ էյլէտիյի թէգայեիւտ, պիր ինսան իչուն օլտուղը կիպի, Ալլահ իչուն տա պիր զահմէթ վէ եա եօրկունլըգ մանաընտա թէլագգը օլունուրսա, եանլըշ թէլագգը օլունը։ չիւնքի Ալլահ հիչ պիր ճէհտ իթմէքսիզին, հիչ պիր եօրկունլըգ տույմագսըզըն, պիր եալընըզ իրատէթի բապպանիյէսիյլէ հէր չէյի սէվգ ու իտարէ էյլէր։ Իյթէ կիւնէշ պիլէ այնի ինչիա իլէ հէմ քիյինաթը թէնվիր էտէր վէ հէմտէ հէր եէրէ հարարէթ վէ հայաթ նէշր էյլէր։ թէնվիր էյլէյէն այրը, հարարէթ վէ հայաթ վէրէն տէ այրը վէ ֆարգը կիւնէշ տէյիլ տիր։

— Էյեր Ալլահ պիզիմ իչէ մէշղուլ օլնուշ օլսա, սընըֆը պէշէր արասընտա ասէվի միւսաւաթ օղուր մը իսի:— Շու զեկիկի վէ ֆագիրիրէ նէ՞ տէմէ՞ի:

— Սընֆը պէշէր արասընտաքի ստէմը միւսաւաթըն սէպէպի, ինսանլարտաքի գապիլիյէթ վէ, մատտի, մանէվի վէ զիհնի էվսաֆ վէ խասսիյէթլէրին հէր պիր սիյագ-

(*) Տես թիւ 144 էջ 622

տա օլմամասընդն նէթիճէսի տիր։ Ալլահ, պիզտէն հէր պիրիմիզէ անճաղ զայէյի ասիյէմիզէ վասըլ օլապիլմիք իչուն լազըմ օլան վասիթալարը վէրմէյէ պօրճլու տըր, հալ պու քի հեր fեսե այնի տէրէճէսէ դուվվէթ, ֆաալիյէթ, իտրաք ու ֆէրասէթ վէրմէյէ պօրճլու տէյիլ տիր։

Հէմ պու ատէմի միւսավաթ խուսուսը տիւնեանդն ահէնկինէ խատիմ օլուր, էն կիւզել ֆազիլէթլէրէ մենպա վէ ինսանլար արասընտա տա պիր բապրթայը իբրիհաs օլուր։

1. Ինսանլարդն այնի հալտէ պուլընմամալարընդն սէպէպի, էքսէրիա Ալլահտան զիյատէ ինսանլար ատրլար։ Պու հալ պիր զըսմընդն ֆաալիյէթինին վէ տիկէր զըսմընդն տա աթալէթինին նէթիճէսի տիր։ Ֆէլան քիմսէնին սէնտէն զիյատէ զէնկին օլմասընդն սէպէպի չօգ տէֆա, սէնտէն զիյատէ ինթիզամրէրվէր, թէսարրուֆա բիայէթքեար, միւսէպպիր վէ չալըշգան օլմասը տէյիլմիտիր։ Բէք չօգ ֆագիրլէրին տէ ֆագիր օլմալարընա սէպէպ թէնպէլ վէ եա միւսրիֆ օլմալարը տէյիլ մի։

2. Պու ատէմը միւսավաթ, ճէմիյէթի պէչէրիյէ իչուն տա լազըմ օլտուղընտան, Ալլահդն բլանը տախիլինտէ տիր։ Էյէր պիւթիւն ինսանլար զենկին օլսալար, հիչ պիր քիմսէ չիֆթճիլիյէ բաղպէթ իթմէյէճէքտի...։ Շայէտ ինսանլարդն քեֆֆիֆէսի տէ ֆագիր օլսալար, օ վագրթ սանսաթլա, իլմ իլէ, թիճարէթ վէ սայիր էսպապը թէրաղզը իլէ մէշղուլ օլան պուլընմայաճադը։ Էօյլէ իսէ հէմ զէնկինլէր պուլընմալը վէ հէմ տէ ֆագիրլէր օլմալը տըր։

3. Ինսանլարդն հալլէրինին պիր տէրէճէսէ օլմամասը, ինսանդն էվսաֆը վէ խասայըսը մանէվիյէսինին տահա բէվնադը պիր սուրէթտէ թէճէլլի իթմէսինէ սէպէպ օլուր։ Զէնկինին ֆագիրէ եարտըմ իթմէք իչուն, օլանընտան պիր զըսմընը օնա վէրմէսինի կէօրմէք, ֆագիրին սապր իլէ իրատէթի իլահիյէյէ թէսլիմիյէթ իլէ մահրումիյէթլէրինի չէքմէսինի կէօրմէք... Նէ գատար խոշ տըր։ Իչթէ պու սէպէպէ մէպնի տիր քի ահվալատաքի պու ատէմը միւսավաթ, տիւնեանդն ահէնկինէ խըտմէթ էյլէր։ Զէնկինի ֆագիրէ, զայիֆի գուվվէթլիյէ բապթ էյլէյէն վէ գարտաշ մահապպէթի վէ միննէթտարլըգ կիպի կիւզել ֆազիլէթլէ ինսանլար արասընտա բապրթայը ուխուվվէթի իհտաս էյլէյէն հէբ օ ատէմի միւսավաթ գազիյէսի տիր։

4. Պուրատաքի պու ֆարգ, ախրեքsե գալգաճադ տըր, արթըգ գալմայաճադ տըր, սօճրաֆիլեր, հանի ֆագիրլէր եվվելիլեր օլաճազլար, չիւնքի օնլարդն չէքմիշ օլտուգլարը զահմէթ վէ մահրումիյէթլէր, հագգլարընտա միւսթէլզիմի միւքեաֆաթ օլաճագ տըր։

— Էյեր Ալլահ պիզի գայրըմըշ օլսա, հիչ շու տիւնեատա աղրը վէ մէհազգաթ օլմըյարմու իտի։

— Աղրը վէ մէշագգաթլարընընդն էքսէրիա սէպէպի պիզիմ գապահաթլարընընդ տըր, էկէր արզուլարընընդ տահա միւթէտիլ օլսալար, թէսավվուրլարընընդ գարինի գապուլ պուլընսալար, մահչէթիմիզ, հայաթընընդ տահա սատէ վէ գանսաթքեար օլսա, չէքճէք պու զատար աղրընընդ վէ մէշագգաթընընդ օլմայաճագտը։

Ալլահ աղրը վէ մէշագգաթլարընընդա միւսատէ իտէր, եա կիւնահլարընընդն քէֆարէթի իչիւն — եա քէնտինէ ֆէլաքէթ զէմանընտա տա սատրգ օլուպ օլմատրընընդը թէճրիւպէ իթմէք իչիւն — վէ եախօտ մէնֆա հալինտէ պուլունտրընընդ չու տիւնեատէն մէյլիմիզի քէսէրէք, կէօյլէրէ ասրլ վաթանընընդ կիպի պագմաղա պիզի մէճպուր իթմէք իչուն։

1. Վիճուտ աղրըլարը էքսէրիա ինսանդն իչի տիր։ Նէ՞ գատար խասթէլիքլէր վար տըր քի. սէֆահէթ ու թէնբէրվէրլիյին նէթիճէլէրի տիրլէր։ Թապահաթ քէնտի գանունընա ռիայէթ էյլէմէյէնլէրի պու սուրէթլէ թէճզիյէ իտէր։

2. Պիր թագըմ աղրը վէ ֆէլաքէթլէր տէ վար տըր քի, ճէնապը Հագգն, տիւնեանդն խարէսի իչիւն վազ էյլէմիշ օլտուղը ումումի գանունլարդն նէթիճէլէրի տիրլէր.

մէսէլա պիր քիմսէ աթէշէ տուշէր, եանար։ Պու վուգուաթը մէն էյլէմէք իչուն մուճիզաթ կէօսթէրմէյէ պօրճլո՞ւ մը տըր։

3. Նիհայէթ, մատտի աղըրլար պիզէ տօղրուտան տօղրույա Ալլահտան տա կէլէպիլիր. եա էյլէմիշ օլտուղըմըզ գուսուրլարըն ճէզասը, եա սէվապ վէ էճր գազանապիլմէք իչուն թէճրիպէ վէ եախօտ պիզի թէվպէյէ կէթիրմէք վէ մէյիլլէրիմիզի տիւնեատան այըրմագ իչուն Ալլահըն իթթիխազ էյլէտիյի վասըթալար մագամընտա։

Թալիին պատէյի նէշէմէնտիյլէ մէսթ օլմուշ վէ հուզուզաթ ու չէհէվաթը նէֆսանիյէլէրի իչինտէ ղայիպ օլմագ իւզրէ պուլունան չօգ քիմսէլէրի Ալլահ թէճրիպէ, ֆէլաքէթ վէ մաթէմ վասըթասըյլա գուրթարմըշ տըր։ Պու թարզ քիմսէլէր իչուն, ֆէլաքէթ՝ չօճուգլարա տէյնէք եէրինի թութար։ Աճըլարը արասընտա քրիստիան վէ տինտար օլուրլար։ Զաթէն ինսանը զահմէթ վէ մէշագգաթ դատար Ալլահա եագլաշտըրան հիչ պիր չէյ եօգ տըր։

(Մապատի վար)

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՌՈՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ

Հոկտ. 8ին Ս. Դոմինիկոսի բակին մէջ ընդունեցան Ս. Քահանայապետին կողմէ 2000 Ումբրիացի, 200 Լուգգացի, 400 Սլեզիացի ուխտաւորներ և ուրիշ հազարաւոր մարդիկ։ Նորին Սրբութիւնը շրջապատուած էր բազմաթիւ Կարդինալներէ և Եպիսկոպոսներէ։ Քահանայապետական Օրհնութեան պահուն ուխտաւորները շատ յուզուած էին, և ապա որոտագին գոչեցին միաբերան. Կեցցէ՛ Պիոս Ժ., Փոխանորդ Քրիստոսի։

*** Հովուական թղթի մը մէջ Լիվրբուլի Արքեպիսկոպոսը կը հաստատէ ուրախութեամբ թէ իր թեմին կաթողիկէից թիւին վրայ, տասը տարուան մէջ, 38,000 հոգի աւելցեր է։ Ասոնց 10,000ը նորադարձ են։ Ասկէ զատ 1902ին 74,000 կաթողիկէ տղոցմէ միայն 2500ը ուրիշ դպրոց կ'երթային. իսկ 1912ին 80,000 տղոցմէ՝ 2200ը միայն։

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐ

Բ. Դրան և Աթէնքի դահլիճին միջեւ բանակցութիւնները կը շարունակուին։ Օսմ. հակառաջարկները ուսումնասիրելու պաշտօն ունեցող հելլէն յանձնաժողովը իր աշխատութիւնները վերջացուցած ըլլալով, արտաքին գործոց նախարար Մ. Բանաս հրաւիրեց Բ. Դրան պատուիրակները որ բանակցութիւններու սկսին։ Այս բանակցութեանց պիտի մասնակցին Մ. Բանաս և Կ. Պոլսոյ հելլէն դեսպանատան նախորդ առաջին քարտուղար Մ. Նաում։ Նիստերը ամէն օր կամ երկու օրը անգամ մը տեղի պիտի ունենան, իւրաքանչիւր գումարումի ատեն ձեռք բերուած արդիւնքին համաձայն։ Կը յուսացուի թէ բանակցութիւնները շուտով աւարտին։ Ամէնէն աւելի վագըֆի խնդիրն է որ պիտի զբաղեցնէ երկու կողմի պատուիրակները։ Աթէնքի թերթերը կ'ըսեն թէ բանակցութիւնները կէս պաշտօնական հանգամանք ունենալով, իւրաքանչիւր նիստէ ետք պաշտօնական տեղեկատուութիւն պիտի չըլլայ։ Հաւանական կը նկատուի որ արտաքին գործոց նախարար Մ. Բանաս նիստերուն արդիւնքը համառօտիւ ծանուցանէ մամուլին միջոցաւ։ Վագըֆի խնդրոյն համար հելլէն պատուիրակներուն աջակցող պաշտօնատարը նիստերուն պիտի չմասնակցի, այլ արտաքին գործոց նախարարին մասնաւոր խորհրդականը պիտի ըլլայ։

*** Թուրք թերթերը կ'ըսեն թէ օսմ. զօրքերը իրենց տեղերը կը դարձուին Կէլիպօլիի, Էրէյլիի և Ռոտոսթոյի նաւահանգիստներէն։ Ամէն միջոց ձեռք առնուած է, որպէս զի Անատոլու զօրուելիք զօրաց փոխադրումը տեղի ունենայ կանոնաւոր կերպով։

*** Պոլսէն և Սինոպէն երկերկու փոխադրանաւեր ղրկուեցան Պուրկազ և Վառնա, օսմ. գերիներու փոխադրութեան համար, որ պիտի տեւէ 10 օր։ Պատերազմական նախարարութեան պիտոյից վարչութիւնը շոգենաւ դրուող զօրքերուն մէջ հիւանդութեանց առաջքը առնելու համար հարկ եղած ամէն նիւթերը ղրկեց։

*** Ֆէթհի պէյ, Իթթիհատին ընդհանուր քարտուղարը, Սոֆիայի օսմանեան դեսպան անուանուեցաւ։ Սոֆիայի օսմ. դեսպանատան Ա. քարտուղար անուանուեցաւ Աթէնքի դեսպանատան Ա. քարտուղար Իպրահիմ Խալիլ պէյ, Բ. քարտուղար՝ Ալի Հայտար պէյ և Գ. քարտուղար՝ Չէթինէի օսմ. դեսպանատան նախորդ դիւանապետ Ճէվտէթ պէյ։

*** Սոֆիայի թերթերը կը հրատարակեն հետեւեալ գիրը, զոր Ռատոսլավօֆ, Կէննատիէֆ և Թօնչէֆ Յունիս 23ին ներկայացուցին Ֆէրտինանտ Թագաւորին. «Երբ խորհրդակցութեան համար պալատ հրաւիրուեցանք, յայտարարեցինք ձեր Վեհափառութեան թէ հարկ էր Թուրքիոյ և Ռումանիոյ մասին ապահով ըլլալ և Աւստրիոյ աջակցութիւնը ստանալ Սերպիոյ և Յունաստանի հետ պատերազմի մը մէջ յաղթող հանդիսանալու համար։ Նմանօրինակ քաղաքականութեան մը յաջողութեան համար հարկ եղած բոլոր պայմանները կային, բայց մեր խորհուրդները նկատի չառնուեցան և շարունակուեցաւ համակերպութիւնը ռուս քաղաքականութեան, հակառակ անոր մեզ պատճառած վնասին բացորոշ նշան-

ներուն, և ահա Պուլկարիա արդի տագնապալի կացութեան մատնուեցաւ։ Մենք այն կարծիքը ունինք թէ այլ եւս պէտք չէ նոր սխալներ գործել։ Մենք միշտ կը հաւատանք թէ Պուլկարիոյ համար փրկութեան միակ ճամբան՝ Աւստրիոյ հետ սերտ բարեկամութիւնն է։ Այս քաղաքականութիւնը պէտք է գործադրել անմիջապէս, վասն զի կորսուած իւրաքանչիւր ժամը կ'ազդէ մեր ճակատագրին վրայ։ Կոչում կ'ընենք Զեր Վեհափառութեան որ այս օրուընէ իսկ հարկ եղած ձեռնարկներն ընէ՝ Պուլկարիան նոր դժբախտութիւններէ և արքայական գերդաստանը նոր պատասխանատուութիւններէ ազատելու համար։

⁂ Պուլկար Վարչապետը Սոֆիայի աւստրիական դեսպանին հետ երկու ժամուն չափ տեսակցեցաւ։ Յետոյ Պուքրէշի պուլկար դեսպանն աւստրիական դեսպանին ու ապա արտաքին գործոց նախարար Մ. Կէնտաշէֆի հետ տեսակցելէ ետք Պուքրէշ ուղեւորեցաւ։ Այս տեսակցութիւններուն մեծ կարեւորութիւն կը տրուի Սոֆիայի մէջ։

⁂ Պուլկար կառավարութիւնն սկսած է Թուրքեւպուլկար սահմանագլխին վրայ զինուորական համախմբում կատարել Թուրքեւպուլկար դաշնագրին տրամադրութեանց համեմատ գրաւելու համար իրեն թողուած երկրամասերը։

⁂ Պուլկար թերթերը կ'իմանան թէ վերջին պատերազմին ատեն Պուլկարիոյ ձեռքէն առնուած երկիրները դարձեալ ստանալու միջոցները դիւրացնելու համար քոմիթէ մը կազմուած է, որուն կը մասնակցին սպաներ, ենթասպաներ և կամաւորներ։

⁂ Եանեայէն կը հեռագրեն Թանի. — Էսատ փաշայի և Վալանայի առաջամեայ կառավարութեան մի եւ որ և է համաձայնութիւն չգոյացաւ։ Բազմաթիւ և ծանր ընդհարումներ տեղի ունեցան հիւսիսային արեւելեան կողմը՝ երկու կողմի կուսակիցներուն միջեւ։ Էսատ փաշա կը շարունակէ զօրք հաւաքել։ Տերվիշ պէյ 500 հոգիով կը յառաջանայ Էսատ փաշայի օգնելու համար։ Հեռագրական հաղորդակցութեանց ընդհատուելուն հետեւանքով, Վալանայի ու ներքին մասերուն միջեւ յարաբերութիւնները դադրած են։ Աւստրիական Լոյդի շոգենաւ մը Վալանա ցամաք հանեց 125 մնտուկ պայթուցիկ նիւթեր։

⁂ Պելկրատէն կը հեռագրեն թէ 6000 Առնաուտ բուռն յարձակում մը ըրին Տիւքովայի կողմը։ Սերպ խուրոնկեցիները կեցուցին զանոնք։ Սերպերը Տրին գետին միւս կողմը քշեցին Առնաուտներն և իշխանութիւններ հաստատեցին Լիուտա—Կորայի կողմերը, ուր բնաւ Առնաուտ չէ մնացած։ Սերպերը գրաւեցին Լիուտքոյին ու Դուշանով—Մօսթը, Առնաուտները փախցնելէ ետքը։

⁂ Պուլկար բազմաթիւ խումբ մը՝ Սերպ հողը մտաւ Բոշանայի մօտ։ Սերպ զօրքեր սկսան հալածել և բուռն ճակատամարտ մը տեղի ունեցաւ։ Պելկրատի մէջ կը հերքուի Պուլկար խումբերու դէպի Շթիպ յառաջանալու լուրը։

⁂ Վիեննա, 14 Հոկտ.— Զիւս Սլաւիէ Բորէսբոնտէնի լուր կը տրուի թէ աղէտալի կռիւ մը տեղի ունեցեր է Հելլեն և Թուրք զօրաց միջեւ Բանթիի մօտ։ Հելլեններն ետ մղեր են Թուրքերն և գրաւեր են Գոյուն Բէոյը։

⁂ Վիեննայէն կարեւոր լուր մը կը հաղորդուի։ Սերպ կառավարութիւնը նկատելով որ իր գրաւած երկիրներուն կցումը հռչակուած է, ձեռնարկեց քաղիթիւլասիոններու ջնջմանը։ Այս որոշումը, որ գլխաւորաբար Աւստրիոյ ազդեցութեանը կը դպչի՝ նոյն երկիրներուն և մանաւանդ Գոսովայի մէջ, խոր տպաւորութիւն գործեց Վիեննայի մէջ և մտահոգութիւն առաջ բերաւ։ Ջնջումի ուղղակի հետեւանքը պիտի ըլլայ աւստրիական նամակատուներու անմիջական փակուիլը և ջնջումն այն առանձնաշնորհումներուն զոր աւստրիական հպատակները, բաւական բազմաթիւ, կը վայելեն հիւսիսային Մակեդոնիոյ մէջ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դէպքեր եւ սկզբունքներ 657
Լուրս Աստուածածինին եէնի միւնիզաթլարը 660
Երանելի Տէր Կոմիտաս Նահատակին պատմական երկու գրութիւնները 661
Օրմանեանի միջադէպին առթիւ 664
Եօթնեակ Բրիստոնէի 666
Ազգ եւ Կրօնք 668
Գաթոլիք Մէցիէպի Էսասլարը 669
Տեղեկագրական 671

ԱՐՏՕՆԱՏԷՐ
ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԷՏԻԿԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳՐԱՊԵՏ
ԳԷՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Կ. Արծագանգ Շաբաթաթերթի, Բերա. Պաւրամ փողոց թիւ 6, Կ. Պոլիս

Երանելի Տէր Կոմիտաս Քահանային վարքը, առանձին հրատարակուեցաւ ընտիր թուղթի վրայ, մաքուր տպագրութեամբ և երեք պատմական պատկերներով։

Փափաքելի է որ ամէն Հայ Կաթողիկէ ունենայ այս գեղեցիկ մատենիկը, որուն միակ նպատակն է ծանօթացնել ամէնուն Երանելի Նահատակին գերազանց բարեմասնութիւնները, և, անոր ջերմեռանդութիւնը ծաւալելով, հրաւիրել ամէնուն վրայ անոր բարեխօսութեան անզուգական արդիւնքները։

Գին 5 դահեկան, էջ 144 ամուր թղթակազմ

Գրքոյկիս երեք պատկերները, 1. Տէր Կոմիտաս քահանայական զգեստով և իր ջերմը, 2. Տէր Կոմիտաս դատաւորին առջև, 3. Գլխատումը, առանձին ալ կը ծախուին. մեծաքանակ գնողներու, գոհացուցիչ զեղչ։

ԿԸ ԾԱԽՈՒԻ «Տարրական Սկզբունք Քրիստոնէական Վարդապետութեան» հաստատեալ եկեղեցական իշխանութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ։ Բաղկացած է 136 էջերէ։ Գին, ամուր թղթակազմը 2 դրկն.։